# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 7

## N PDU-200-01-26
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «17» «08» 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իգիթյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, հիմք ընդունելով 05.03.2026 թվականին կնքված **PDU-200-01-26** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **PDU-200-01-26** ծածկագրով գնման պայմանագրի 3.3 կետով սահմանված **242 000 000** (երկու հարյուր քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս **101 000 000** (հարյուր մեկ միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **936 000 000** (ինը հարյուր երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ, որը կիատկացվի որպես կանխավճար՝ հիմք ընդունելով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 5-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2026 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1150-Ն որոշումը: Վճարումը Պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | «Հայփոստ» ՓԲԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան 0061,Արշակունյաց 65/5 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011042471 | Հ/Հ՝ 1930003703156000 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ՝ 02507464 |
| Հեռ. 010 59-61-52 | Հեռ. 010 54-44-44 |
| Էլ. հասցե. gnumner@mia.gov.am | Էլ. Փոստ: business@haypost.am |
| Խ. Իգիթյան | Շ. Ալեքսանյան |
| / ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող / | / «Հայփոստ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն/ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
<< 17 >> 08 2026թ.
PDU-200-01-26 ծածկագրով գնման պայմանագրի

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64111200/2 | Փոստային ծառայություններ՝ կապված նամակների հետ | | | | | | | | 101 000 000 | 101 000 000 | 101 000 000 | 101 000 000 | 101 000 000 | **101 000 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն. gnumner@mia.gov.am**

**_____________ Խ. Իգիթյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող /**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«Հայփոստ» ՓԲԸ**
**ք. Երևան 0061,Արշակունյաց 65/5**
**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 1930003703156000**
**ՀՎՀՀ՝ 02507464**
**Հեռ. 010 54-44-44**
**Էլ. Փոստ: business@haypost.am**

**_____________ Ծ. Ալեքսանյան**
**/ «Հայփոստ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**